

## ՔՐԻՍՏՈՍԻ ԹԱՂՄԱՆ ՅԻՇԱՏԱԿՈՒՄ

2 Ապրիլին, Աւագ Ուրբաթի երեկոյեան, մեր Թեմի բոլոր եկեղեցիները յատուկ արարողութիւններով նշեցին Քրիստոսի թաղման յիշատակը:

Թեմիս բարեխնամ Առաջնորդ Բարձր. Տ. Մուշեղ Արք. Մարտիրոսեան հանդիսապետեց Ս. Քառասնից Մանկանց եկեղեցւոյ արարողութեանց: Քրիստոսի խաչելութեան ու թաղման յիշատակման նուիրուած արարողութեան ներկայ եղան Հայաստանի գլխաւոր հիւպատոս Գրիգոր Յովհաննիսեան, Ազգ. Վարչութեան ատենապետ Դոկտ. Կարօ Յակոբեան, ժողովականութեան ներկայացուցիչներ եւ մեծ թիւով հաւատացեալներ: Իր պատգամին մէջ, Առաջնորդ Սրբազանը հաւատացեալներուն ուշադրութիւնը հրաւիրեց օրուան խորհուրդին վրայ, շեշտելով, որ բոլորիս կեանքի պարգեւատուն, իր խոստումին համաձայն, պիտի յաղթէ մահուան եւ մեզի պիտի պարգեւէ ճշմարիտ կեանք:

## COMMEMORATING GOOD FRIDAY

On the evening of Friday, April 2<sup>nd</sup>, 2010, Good Friday was observed, commemorating the burial of our Lord Jesus Christ.

H.E. Archbishop Moushegh Mardirossian, Prelate, officiated over the service at Forty Martyrs Church in Orange County and delivered his message on this solemn occasion.

In his sermon, the Prelate called on the faithful to reflect on the profound depth and meaning of the Good Friday service commemorating the culmination of the earthly ministry of our Lord Jesus Christ and the fulfillment of His promise to triumph over death to grant us life.

Among the faithful in attendance were the Consul General of Armenia the Honorable Grigor Hovhannisyán, Executive Council Chair Dr. Garo Agopian, and community representatives.